ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Ծաղկաձոր** **12/07/2024**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Ռուզաննա Բաբայանը, Հմայակ Խաչատրյանը, Գրիգոր Ղարիբյանը, Յուրա Մանուկյանը, Արթուր Մելոյանը, Ռուբեն Սաֆարյանը, Նունիկ Ստեփանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Նարինե Խաչատրյան, Ռիմա Մանուկյան, Արա Մեսրոպյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ոսկան Եղիազարյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բադալյանը**

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ|*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածի պահանջներով՝

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 2024 թվականի հուլիսի 12-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը.
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող մեքենան աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին.
2) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը անհատույց մշտական օգտագործման տրամադրելու մասին.
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին.
5) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին.
6) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին.
7) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
8) Հյուրանոցային համալիրի կառուցման նախնական համաձայնություն տալու մասին.
9) Ծառայողական մեքենա ձեռք բերելու համաձայնություն տալու մասին.
10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025, 2026 և 2027 թվականնների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.
11) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օտարելու մասին.
12) Ծաղկաձոր համայնքի Փյունիկ բնակավայրում երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման նախնական համաձայնություն տալու մասին.
13) Ծաղկաձոր համայնքի Հանքավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող մարմարի հանքավայրում ջարդիչ տեսակավորող կայանի կառուցման նախնական համաձայնություն տալու մասին.
14) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի աղբահանության և սանիտարական կառավարման 2024-2028 թվականների տեղական պլանը հաստատելու մասին.
15) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
16) «Հայաստանի Համայնքների Միություն» իրավաբանական անձանց միությանն անդամակցելու և անդամավճար վճարելու մասին.
17) Հողամասի վարձակալության պայմանագիրը վերակնքելու և տարեկան վարձավճարը վերանայելու մասին.
18) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
19) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
20) Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 20-ի N 92 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
21) Ծաղկաձորի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշելու և համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի N 35 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին.
22) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի երկրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.
23 ) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին.
24) <<Դու մենակ չես>> մարդասիրական հասարակական կազմակերպությանը դրամական օգնություն տրամադրելու մասին.
25) Հենասյան օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին.
26) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի

սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օտարելու մասին.
27) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օտարելու մասին.
28) Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*<u>/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/</u>*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով <<էքսպերտ Օցենկա սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված գնահատման վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

Թույլատրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող մեքենան աճուրդային կարգով օտարել և սահմանել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86/

Լսեցին
***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*<u>/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/</u>*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել «Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 1:
համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց

3. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ հավելված 4:
4. Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» N 157-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված «4264» (Տրանսպորտային նյութեր) «4500,0» թիվը փոխարինել «5500,0» թվով:
2) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված «4831» (Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ) «200,0» թիվը փոխարինել «2200,0» թվով:
3) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված «5113» (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) «117165,1» թիվը փոխարինել «116165,1» թվով:
4) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված «5134» (Նախագծահետազոտական ծախսեր) «3000.0» թիվը փոխարինել «4000,0» թվով:
5) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված «4891» (Պահուստային միջոցներ) «192457,8» թիվը փոխարինել «189457,8» թվով:.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ն/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարել և սահմանել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:
2. Աճուրդը կազմակերպել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Կողմ-7 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89/

Լսեցին
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականիմայիսի 26-իթիվ 550-Նորոշման 1-ին կետի, 1-ին, 3-րդ և 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Դավիթ Արմենի Հայրապետյանի դիմումը

1. Դավիթի Արմենի Հայրապետյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, գյուղ Հանքավան 1-ին թաղամաս 18 բնակելի տուն հասցեում գտնվող 0,295 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-039-0017-0003, վկայական N 16032023-07-0009) մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Հանքավան 1-ին թաղամաս 18/1 հողամաս հասցեում գտնվող 0,03241 հա ( կադաստրային ծածկագիր՝ 07-039-0017-0024, վկայական N 24052024-07-0087) մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող ՝ բնակավայրերի, բնակելի կառուցապատման՝ համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 608563 ( վեց հարյուր ութ հազար հինգ հարյուր վաթսուն երեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:
Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականիմայիսի 26-իթիվ 550-Նորոշման 1-ին կետի, 2-րդ և 4-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Աշոտ Վաղինակի Պետրոսյանի դիմումը

1. Աշոտ Վաղինակի Պետրոսյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Միեր Մկրտչյան փողոց 1-3 հողամաս հասցեում գտնվող 0,16983 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0009-0141, վկայական N 09042024-07-0084) մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Միեր Մկրտչյան փողոց 1/2 հասցեում գտնվող 0,00107 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0009-0121, վկայական N 24052024-07-0037) մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող` բնակավայրերի, բնակելի կառուցապատման՝ համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 173 090 ( մեկ հարյուր յոթանասուն երեք հազար իննսուն ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Մեղրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող, 0. 15973հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող /07-045-0381-0004/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92/

Լսեցին
***ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. <u>ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի և հիմք ընդունելով 2024 թվականի մայիսի 02-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

1. Տալ նախնական համաձայնություն Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր , Միեր Մկրտչյան փողոց 60 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով «ՔԵՅՁԻԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող 15,0 հա մակերեսով ( ծածկագիր՝ 07-005-0021-0137) հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված ՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասում հյուրանոցային համալիրի կառուցման համար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93/

Լսեցին
***ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. <u>ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18- րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

Տալ համաձայնություն՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալին ծառայողական էլեկտրական ավտոմեքենա ձեռք բերելու:
Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025, 2026 ԵՎ 2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. <u>ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025, 2026 և 2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն 1, 2, 3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Խաչիկ Աղաբեկի Տիգրանյանի դիմումը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոցի, 68/6 շենքի, 29 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օտարել Խաչիկ Աղաբեկի Տիգրանյանին (ծնված 27.03.1958 թվականին, անձնագիր՝ AS0458965, տրված 26.12.2018թ. 049 կողմից ):
2.Շենքի կառուցման (սպասարկման) նպատակով տրամադրված հողամասի և շենքի ընդհանուր օգտագործման տարածքի նկատմամբ սեփականատերը ունի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունք:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96/

Լսեցին
***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՅՈՒՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16 հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի , հիմք ընդունելով 2024 թվականի հունիսի 14-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

1. Տալ նախնական համաձայնություն «ԱՄ ԱՐՏ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Փյունիկ բնակավայրի վարչական տարածքի Թեժագետ տեղամասում նեֆելինով հարուստ սիենիտների հաշվարկված պաշարների վերականգման երկրաբանահետախուզական ուսումնասիրության 2024-2027 թվականների ծրագրի շրջանակներում աշխատանքներ իրականացնելու համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-0 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97/

Լսեցին

***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՔԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐՄԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ՋԱՐԴԻՉ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ***ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16 հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի , հիմք ընդունելով 2024 թվականի հունիսի 18-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

1. Տալ նախնական համաձայնություն «Մարմար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Հանքավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ Մարմարի հանքավայրում իրականացնել ջարդիչ տեսակավորող կայանի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ***ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***/

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.4-րդ հոդվածի, 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 25-ի N 07-Լ հրամանը

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի աղբահանության և սանիտարական կառավարման տեղական 2024-2028 թվականների

պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Լ/

Լսեցին
***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48. 1-րդ, 74-րդ և 76 –րդ հոդվածներով՝ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հողամասը ընգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Թույլատրել՝ համայնքային սեփականություն հանդիսացող , Հայաստանի Հանրապետություն, մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր Վեցիկ ճարտարապետի փողոց, 8/1 հողամաս հասցեում գտնվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման 0,01645 հա ( ծածկագիր՝ 07-005-0007-0088) մակերեսով հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով՝ 50 տարի ժամկետով օգտագործման տրամադրել:
2. Կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 50 000 ( հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100/

Լսեցին
***«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ կետի, Տեղական ինքնակառավարման մասին եվրոպայի խարտիայի 10-րդ հոդվածի, 2-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Անդամակցել « Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը:
2. Համայնքի բյուջեում նախատեսել Միության անդամավճար 100 000 ( հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101/

Լսեցին
**ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 3-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Հանքավան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 04-ի թիվ 03 որոշում

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Հանքավան գյուղի վարչական տարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ 2,2127 հա մակերեսով, 07-039-0129-0001 կադաստրային ծածկագրով հողամասի, «Մարմար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված հողամասի վարձակալության պայմանագրով /կնքված 2014 թվականի մարտի 18-ին/ սահմանված ամսեկան վարձավճարը 6450 / վեց հազար չորս հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրպետության դրամի փոխարեն, սահմանել հողամասի տարեկան վարձավճար 420000 / չորս հարյուր քսան հազար/ Հայաստանի Հանրպետության դրամ:

2.«Մարմար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել համապատասխան համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102/

Լսեցին
**ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական

ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Խ. Կեչառեցու փողոց 4 հասցեում գտնվող, «ԿԵՉԻ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0,5961 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0026-0818) հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության հողամասի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Կողմ-7 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103/

Լսեցին

*ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 22-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-իթիվ 1920-Ն որոշման 25-րդ կետի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականիհունիսի 16-իթիվ 927-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի պահանջները, 2006 թվականի հունիսի 6-ի Ծաղկաձոր համայնքի ավագանու թիվ 3/1 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը չի առնչվում Հողային օրենս գրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին, չի գտնվում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքում, նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դասակարգմամբ բարձրագույն ռիսկայնության օբյեկտների կառուցման համար, նախատեսված չէ պետական բյուջեի (այդթվում՝ պետությանը տրամադրված վար կային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբյեկտների կառուցման համար

1.Հաշվի առնելով Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի գլխավոր հատակագիծը՝ Ծաղկաձոր համայնքում 0,11819 հա մակերեսով ( 07-005-0023-0002 կադաստրային ծածկագրից) անտառային, անտառ նպատակային և գործառնական նշանակության հողամասը փոփոխել հատուկ պ ահպանվող, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության :

2.Սույն փոփոխությունը կատարել նաև համայնքի կադաստրային քարտեզում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104/

Լսեցին

*ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 92 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, 1-ին մասի, 2-րդ կետի և 34-րդ հոդվածի պահանջներով

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 20-ի « Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գին սահմանելու մասին » թիվ 92 որոշման հավելված աղյուսակի 4-րդ կետը հանել.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | ք. Ծաղկաձոր Սարալանջի 60/2 | 07-005-0022-0601 | 1.2 | Հատուկ պահպանվող տարածքների | Հանգստի համար նախատեսված | 140 000 000 | չկա |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105/

Լսեցին

*ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N35 ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

1. Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների քանակական կազմը սահմանել ավագանու 5 անդամներից:
2. Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմում ընդգրկել համայնքի ավագանու ներքոհիշյալ անդամներին՝

1) Առաքելյան Արմենուհի

2) Բաբայան Ռուզաննա

3) [illegible]

4) Բաղրամյան Կարեն

5) Հովհաննիսյան Մերուժան

3. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի <<Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշելու մասին>> թիվ 35 որոշումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ:***

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և « Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի երկրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.***

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հոկեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի հողային հաշվեկշռին , առ 2024 թվականի հուլիսի 01-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108/

Լսեցին
**«ԴՈՒ ՄԵՆԱԿ ՉԵՍ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. <<Դու մենակ չես>> մարդասիրական հասարակական կազմակերպությանը տրամադրել դրամական աջակցություն՝ 100 000 / մեկ հարյուր հազար / Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ բուժման կարիք ունեցող երեխաներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109/

Լսեցին
**ՀԵՆԱՍՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ 66 որոշումը և <<Սիներջի Յուրոփ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Արման Գևորգյանի դիմումը՝

Թույլատրել «Սիներջի Յուրոփ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրել օգտագործել Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Օրբելի եղբայրներ 20 հասցեում գործող Դը Լօջ . /The LODGE/ ռեստորանի հարևանությամբ գտնվող, համայնքին պատկանող արտաքին լուսավորության 1 հենասյունը՝ գովազդային վահանակ ամրացնելու նպատակով, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված վճարի դիմաց:

Կողմ-0 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110/

Լսեցին
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Դավիթ Երմամադի Սարգսյանի դիմումը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոցի, 68/6 շենքի, 8 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օտարել Դավիթ Երմամադի Սարգսյանին (ծնված 31.05.1965թ., անձնագիր՝ AV0661533, տրված 03.03.2023թ. 049 կողմից):

2. Համասեփականատեր ճանաչել Լարիսա Ալբերտի Հովհաննիսյանին (ծնված 30.09.1971թ., ՆՔ 007859960, տրված 09.09.2015թ. , 049-ի կողմից ), Էմին Դավիթի Սարգսյանին (ծնված 28.07.2000թ., անձնագիր՝ AT0665172, տրված 11.02.2021թ., 049 կողմից ):

3.Շենքի կառուցման (սպասարկման) նպատակով տրամադրված հողամասի և շենքի ընդհանուր օգտագործման տարածքի նկատմամբ սեփականատերը ունի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունք:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Կարեն Ավետիքի Ավետիքյանի դիմումը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոցի, 68/2 շենքի, 23 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օտարել Կարեն Ավետիքի Ավետիքյանին (ծնված 22.09.1993թ., անձնագիր՝ AV0503317, տրված 01.11.2022թ., 012-ի կողմից):

2.Շենքի կառուցման (սպասարկման) նպատակով տրամադրված հողամասի և շենքի ընդհանուր օգտագործման տարածքի նկատմամբ սեփականատերը ունի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունք:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112/

Լսեցին

***ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին օրենքի» 14³-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920 -Ն որոշումը , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 09-ի թիվ 29 որոշմամբ հաստատված Մեղրաձոր գյուղի գլխավոր հատակագծի պահանջները և քաղաքացի Ռոման Շահենի Մուրադյանի դիմումը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող Ռոման Շահենի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական 1,2633 հա այլ հողատեսքից ( ծածկագիր՝ 07-045- 0452-0012) 0,00519 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող Ռոման Շահենի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական 0,64875 հա խոտհարքից ( ծածկագիր՝ 07-045- 0452-0006) 0,02130 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

3. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակության փոփոխության դեպքում անհրաժեշտ է վճարել հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113/

Ավագանու անդամներ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ* ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*Նիստն արձանագրեց՝* Գարիկ Բաղդյան